

Ա. Հ. ՓԱՓԱՋՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՔՅԱԹԻՐ ՉԵԼԵՐԻ «ԶԻՀԱՆ-ՆՅՈՒՄԱ»-ՈՒՄ
(17-րդ դ.)

Միջնադարյան Օսմանյան կայսրության պատմագրությունը իր նշանակալից զարգացմանը հասավ 17-րդ դարում: Հայտնվում են հանգամանորեն շարադրված մի շարք երկեր, նվիրված Օսմանյան կայսրության անկմանը, որոնց հեղինակները հանդես են գալիս առավել ինքնուրույնությամբ և համարձակ դատողություններով՝ տեղի ունեցած իրադարձությունների շուրջը: Ի տարբերություն բանաբաղված աշխատությունների, որոնք հատուկ էին նախորդ հեղինակներին, 17-րդ դ. մի շարք պատմաբաններ պաշտպանում են տվյալ ժամանակի առաջավոր գաղափարները և ունակություն ցուցաբերում վերլուծելու Օսմանյան կայսրության ճգնաժամային անկման հետ կապվող բարդ հարցերը:

Այդ ժամանակվա օսմանյան իրականության մեջ բազմակողմանի զարգացած անձնավորություններից մեկն էր համարվում Քյաթիր Չելեբին¹:

Քյաթիր Չելեբին հանրահայտ է ոչ միայն որպես ականավոր թուրք պատմագիր. նա իր ավանդն է ներդրել գիտության այնպիսի բնագավառներում ինչպիսիք են՝ աշխարհագրությունը, փիլիսոփայությունը, մատենագիտությունը և այլն: Նրա աշխատությունները, որոնք իրենց մեջ պարունակում են հարուստ փաստական տեղեկություններ, լայն ուշադրության են արժանացել ոչ միայն Թուրքիայում, այլև նրա սահմաններից դուրս, հատկապես նվրոպայում:

¹ Մուստաֆա Իբն Արզուլահը (1609—1657) արևելագետների շրջանում առավելապես հայտնի է Քյաթիր-Չելեբի կամ Հաջի Խալիֆա անուններով: Այդ մասին տե՛ս Ա. Խ. Սաֆրաստյան, 17-րդ դարի թուրքական գիտական մտքի ներկայացուցիչներ Քյաթիր Չելեբին և էվլիա Չելեբին, «Արևելագիտական ժողովածու», հատ. 2, 1964, էջ 283—301:

Սուլյն հոգւածի սահմաններում իհարկե հնարավոր չէ հանգամանորեն կանգ առնել Քյաթիր Զելեբիի կյանքի և գիտական գործունեության ժառանգության վրա: Կաշխատենք ցույց տալ Քյաթիր Զելեբիի «Ջիհան նյումա»-ի (Աշխարհի հայելի) անհերքելի նշանակութիւնը, որպէս աղբյուր Հայաստանի պատմական աշխարհագրության, բացահայտել և համեմատել այն սկզբնաղբյուրները, որոնք հեղինակը օգտագործել է «Արմենիա երկրի մասին»² գլուխը շարադրելիս և կանգ առնել գոյութիւն ունեցող թարգմանութիւնների վրա:

«Ջիհան-նյումա»-ն հանդիսանում է առաջին ընդհանուր պատմա-աշխարհագրական աշխատութիւնը, որի թուրքերեն շարադրմանը Քյաթիր Զելեբին ձեռնարկել է 1648 թ.³ Գոյութիւն ունեն «Ջիհան նյումա»-ի երկու անավարտ խմբագրութիւններ: Նրանցից առաջինը գրված է արաբական և պարսկական աղբյուրների հիման վրա: Եվրոպական երկրների վերաբերյալ բավարար նյութերի բացակայության պատճառով աշխատութիւնը մնացել է անավարտ: Այդ իսկ պատճառով եվրոպական մի քանի ատլասների, հատկապէս «Գերհարդ Մերկատորի» «Atlas Minor»-ի թարգմանութիւնից հետո Քյաթիր Զելեբին ձեռնամուխ է լինում «Ջիհան նյումա»-ի երկրորդ խմբագրությանը և վերստին մաքրագրում է այն 1654 թ.⁴: Այստեղ ի հակադրութիւն եվրոպացի աշխարհագրագետ-

2 Ժամանակակից թուրք պատմաբանները իրենց աշխատութիւններում հետապնդելով ազգայնամոլական նպատակներ, փորձում են նենգափոխել և խեղաթուրել համաշխարհային ճանաչում ստացած պատմական դիպքերը: Նրանք հատկապէս ճգնում են ժխտել հայ ժողովրդի պատմական անցյալի, Արևմտյան Հայաստանի գոյութիւնը: 1957 թ. թուրք պատմաբան Համիդ Սադի Սելինը տպագրեց առանձին ուսումնասիրութիւն «Ջիհան նյումա»-ի վերաբերյալ: Այդ ուսումնասիրութիւն մեջ նույնությամբ բերված են այն երկրների անունները, որոնք նկարագրվել են Քյաթիր Զելեբիի կողմից, սակայն «Ջիհան նյումա»-ում շատ պարզ գրված «Արմենիա երկրի մասին» վերնագիրը զարձել է «Արևելյան Անատոլիա»:

Ցե'ս Kâtip Celebi, Hayati ve eserleri hakkında incelemeler, Ankara, 1957, s. 127. Հետազոտում հաղափված «Kâtip Çelebi».

3 «Ջիհան նյումա»-ի վերաբերյալ գոյութիւն ունեն մի շարք ուսումնասիրութիւններ, որոնցից առավել բովանդակալից են ակադ. Ի. Ցու. Կրաչկովսկու և գերմանացի արևելագետ Յ. Թեշնեբիի աշխատութիւնները, Ցե'ս Н. Ю. Крачковский, Избранные сочинения, т. IV, М.—Л., 1957. F. Taeschner, Die Geographische Literatur der Osmanen ZDMG, 77 (2), 1923. A. A. Abdulkhak, La Science chez les turcs Ottomans, Paris, 1934, p. 107—116. O. S. Gökyay, «Kâtip Çelebi», s. 61—73. H. S. Selen, «Kâtip Çelebi», s. 121—137.

4 Օտար գրականության թարգմանության գործում նրան օգնել է ֆրանսիացի դավանափոխ Շելյա Մուհամմեդ Իսլասին:

ների, որոնց համար բնորոշ էր առաջին տեղը տալ արևմտյան երկրներին, Քյաթիր Զելեբին սկսեց իր շարադրանքը Ասիայի երկրներին նկարագրությունից՝ Ճապոնիայից:

«Ջիհան նյումա»-ն թուրքերեն տպագրված առաջին գրքերից մեկն է, այն հրատարակել է թուրքական առաջին տպարանի հիմնադիր, ծագումով հունգարացի, իբրահիմ Մյուսթեֆերիկյան 1732 թ.⁵: Այս հրատարակությունը ունի բազմաթիվ լրացումներ՝ կատարված 17-րդ դարի արաբ աշխարհագրագետ Աբու-Բեքր Իբն-Բահրամի (մեռ. 1691 թ.) «Ջոկրաֆիյա-ի Քաբիր» («Մեծ աշխարհագրություն») գրքի հիման վրա և մի շարք հավելվածներ ու քարտեզներ բերված հրատարակչի կողմից: Անհրաժեշտ է նշել, որ իբրահիմ Մյուսթեֆերիկյան մտադիր է եղել «Ջիհան նյումա»-ն հրատարակել երկու հատորով, որոնցից առաջինը պետք է ընդգրկեր Ասիա մայր ցամաքի նկարագրությունը, իսկ երկրորդ հատորը՝ Եվրոպան, Աֆրիկան և Ամերիկան: Սակայն երկրորդ հատորը հրատարակելու նրա մտադրությունը չի իրագործվել:

«Ջիհան նյումա»-ի հրատարակությունը, որը ներկայումս հանդիսանում է մատենագիտական հազվագյուտ օրինակ, բաղկացած է ընդարձակ ներածությունից և առանձին գլուխներից, ուր տրված է ասիական երկրների նկարագրությունը: Քառասունմեկերորդ գլուխը նվիրված է Հայաստանի նկարագրությանը: Այս գլխում խոսվում է միայն Արևմտյան Հայաստանի մասին, այսինքն այն նահանգների մասին, որոնք Կասրի Շիրինի (14 սեպտեմբեր 1639 թ.) պայմանագրով մնացին Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Քյաթիր Զելեբին այս գլխում Արևելյան Հայաստանի նկարագրությունը առանձին չի տվել: Արևելյան Հայաստանը, որտեղ կազմվել էին Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի խանությունները, այդ ժամանակ գտնվում էր Սեֆյան Պարսկաստանի գերիշխանության ներքո: Արևելյան Հայաստանի նահանգների նկարագրությունը տրվում է 39-րդ գլխում, Վրաստանի և Ադրբեջանի (Ատրպատականի) քաղաքների նկարագրության հետ:

«Ջիհան նյումա»-ի հեղինակային ձեռագիրը, որը գտնվում է «Թոփկապի»-ի (Պոլիս) պալատում⁶ և այլ ձեռագրային ընդօրինակությունները վերջանում են Վանի վիլայեթի նկարագրությամբ: Հայտնի է, որ Քյաթիր Զելեբի գրչին է պատկանում «Արմենիա երկրի մասին» նկարագրության միայն մի մասը, այսինքն՝ Վանի

⁵ کاتب چلبی، جهانما استانبول ۱۷۳۲

⁶ O. Ş. Gökyaş, Kâtip Çelebi, s. 69.

և Կարսի վիլայեթները: Մնացած վիլայեթների նկարագրությունը վերցված է վերոհիշյալ աշխարհագրագետի՝ Աբու-Քեքր իբն-Քահ-րամի աշխատությունից և լրացված է «Ջիհան նյումա»-ի հրատարակիչ Իբրահիմ Մյուսթեֆերրիկյաի կողմից:

Այս կապակցությամբ Իբրահիմ Մյուսթեֆերրիկյան իր «Հրատարակչի հավելված»-ում (تذييل المطابع) տալիս է հետևյալ բացատրությունը.

«Թյուրքմացությունից խուսափելու համար [անհրաժեշտ է հիշել], որ այս հետաքրքիր երկի հեղինակը՝ հանգուցյալ Քյաթիր Չելեբին գրքի սկզբում խոստացել էր, որպեսզի այս հանրահայտ խմբագրության մեջ նկարագրի աշխարհի պետությունները և երկրների դիրքը Արևելքից դեպի Արևմուտք: [Այսուհանդերձ] այն հասցվում է մինչև այստեղ: Հեղինակային ձեռագիրը և տարրեր մարդկանց մոտ գտնվող ընդօրինակությունները Վանի վիլայեթի նկարագրությունից այն կողմ չեն անցնում: Ի միջի այլոց, հարկ եղավ գրքի սկզբից մինչև այստեղ տալ մի շարք բացատրություններ, իսկ վերջում ամբողջացնել այն: Ինչպես ձեռագրում, այնպես էլ այս հրատարակության մեջ 41-րդ գլուխը ընդգրկում է «Արմենիա երկրի» նկարագրությունը: Հիշյալ երկրի բաժանման և սահմանազատման ժամանակ, մատնանշելով գոյություն ունեցող տարածայնությունները, [Քյաթիր Չելեբին], ասել է՝ «Երգրումի և Կարսի վիլայեթները, որոնք մտնում են Մեծ Արմենիայի մեջ, նկարագրելու ենք առանձին բաժիններով»: Ակնհայտ է, որ [Քյաթիր Չելեբին] այս նկարագրությունները տալիս է զուգընթացաբար [հարևան] երկրների տարրեր գլուխներում և բաժիններում: Հավանական է, որ այս գրքի շարունակությունը կորել է կամ անժամանակ մահը չի թույլատրել [հեղինակին] կատարելու իր խոստումը: Ուստի, նվաստըս՝ (այսինքն՝ Իբրահիմ Մյուսթեֆերրիկյան—Ա. Փ.) որպեսզի գոնի մոտավորապես իրագործեմ հանգուցյալի նպատակն ու ցանկությունը, խոնարհաբար, փմ հնարավորության սահմաններում տալիս եմ երկրների ու պետությունների նկարագրությունը, ձգտելով պահպանել նրա [Քյաթիր Չելեբիի] աշխատության շարադրանքի ոճն ու հաջորդականությունը: Քանի որ Կարսի և Չըլդըրի վիլայեթները նախապես համառոտ հիշատակվում և նկարագրվում են Գյուլըշիստանի և Ախաախայի (Ախալցխա) գլուխներում, ուստի մենք կսկսենք էրգրումի վիլայեթի նկարագրությունից: Դրանով մենք արժանի հարգանք մատուցած կլինենք նաև նրանց, որոնք հաստատում են, որ հիշյալ վիլայեթի քաղաքները պատկանում են

Մեծ Արմենիային: Այնուհետև կաշխատենք անցնել Ասիայի մյուս երկրներին նկարագրության, որպեսզի ամենաբարձրյալն աստօժ օգնությամբ գիրքը ամբողջացնենք: Երկրների և պետությունների նկարագրության ընթացքում մենք ընտրեցինք և կրճատեցինք Աբու Բեքր Իբն Բահրամ ալ-Դիմեշկիի թարգմանած «Ջոկրաֆիյա»-ի Քարիր զգրքի առանձին մասերը, իսկ երեմն էլ դիմեցինք տեքստի անիոփոխ տեղադրման»⁷:

Այս ժանոթագրությունից պարզվում է, որ Քյաթիր Չելեբիի «Ջիհան նյումա»-ում, հրատարակչի կողմից ընդգրկվել են Աբու Բեքր Իբն Բահրամի՝ «Մեծ աշխարհագրություն» երկը, որի հիմքում ինչպես հայտնի է, ընկած է Հոլանդացի գիտնականներ՝ հայր և որդի Բլեունների հանրահայտ Atlas Major»-ի⁸ թարգմանությունը:

«Ջիհան նյումա»-ին նվիրված մի շարք հետազոտությունների հեղինակները, նշում են, որ Աբու Բեքր Իբն Բահրամը հանդիսացել է «Ջիհան նյումա»-ի շարունակողը⁹:

Մենք հնարավորություն չունեցանք de visu ստուգելու, թե ինչպես է կատարվել այդ շարունակությունը հիշյալ ձեռագրերում: Դժբախտաբար Ա. Ա. Արզուհակը չի մատնանշել ընդօրինակված այն ձեռագրերի տարբերվելը, որոնք ինչպես ինքն է նշում, ունեցել են Իբն Բահրամի կողմից կատարված շարունակությունը¹⁰: Ուստի, քանի որ «Ջիհան նյումա»-ի հեղինակային ձեռագրում բացակայում է Իբն Բահրամի կողմից գրված շարունակությունը¹¹, ապա այն հարցը թե վերջինս ե՞րբ և որտեղ է կատարել իր շարունակությունը մնում է դեռևս չլուսարանված: Ի միջի այլոց, վերևում բերված Իբրահիմ Մյութեֆերիկայի բացատրությունից հետևում է, որ հատկապես նա՝ Իբրահիմ Մյութեֆերիկան է կատարել այն նյութերի ընտրությունը Իբն Բահրամի երկից, որոնք բացակայում

⁷ «Ջիհան նյումա», էջ 422:

⁸ Տե՛ս Joan Blaeu, Atlas Major seu cosmographia blaeulana qua solum, salem, coelum accuratissime describuntur, Amsterdam, 1662.

⁹ И. Ю. Крачковский, Избр. соч., стр. 619, 632. F. Babinger, Die Geschichtschreiber der Osmanen und ihre Werke, Leipzig, 1927, Ss. 119, 226. О. Ш. Гökyaу, «Kâtîp Çelebi», s. 66—68. A. A. Abdulkhak, La science chez les turcs Ottomans, p. 121.

¹⁰ Ա. Ա. Արզուհակը նշում է, որ «Ջիհան նյումա»-ի ձեռագիր օրինակներից մեկը՝ Իբն Բահրամի շարունակությամբ, դառնում է բրիտանական թանգարանում 1030 համարի տակ:

¹¹ О. Ш. Гökyaу, Kâtîp Çelebi, s. 68—69.

են «Ջիհան նյումա»-ում: Այսպիսով մեզ համար հավաստի է մը-
նում այն փաստը, որ «Ջիհան նյումա»-ի հրատարակության վեր-
ջում՝ 422 էջից հետո բերված նյութերը փոխառնված են Իրն Բահ-
րամի գրքից: Այսուհանդերձ Իրն Բահրամի աշխատության բնագրի
անմիջական կապը «Ջիհան նյումա»-ի բնագրի հետ դեռևս չի կա-
րելի լիովին լուսաբանված համարել, քանի որ տվյալ հարցը
չի ուսումնասիրված պատմաբանների կողմից:

Իրն Բահրամի աշխատությունների նշանակության մասին ան-
հրաժեշտ է գրել հատուկ հետազոտություն: Դեռևս չի ուսումնա-
սիրված օգտագործված աղբյուրների և նրա ստեղծագործության
ինքնուրույնության մակարդակը: Պարզ է թե նրա աշխատությունը
ի՞նչ աստիճանի է փոփոխության ենթարկվել Իբրահիմ Մուսեֆե-
րիկյաի կողմից, երբ վերջինս ընտրել և կրճատել է իր օգտագոր-
ծած նյութերը:

Ընդհանուր առմամբ շարադրանքի ոճը խիստ համանման է
Քյաթիբ Չելեբիի շարադրանքի ոճին: Այսուհանդերձ հեշտու-
թյամբ կարելի է նկատել, որ Իրն Բահրամի աշխատությունից փոխ-
առնված տեքստի լեզուն պարունակում է նշանակալից քանակու-
թյամբ արաբական տարրեր, չնայած որ քերականական կառուց-
վածքը թուրքերեն է: Ըստ երևույթին այս հանգամանքը բացա-
տրվում է նրանով, որ Իրն Բահրամը ծագումով Դամասկոսից լի-
նելով՝ հիմնականում ապրել է Հալեպում և ապա Պոլսում և Քյա-
թիբ Չելեբիի նման լավ տիրապետելով թուրքերեն և արաբերեն
լեզուներին, առավելապես արաբերենի ազդեցության տակ է մնա-
ցել:

«Ջիհան նյումա»-ի աղբյուրները.— Ինչպես վերևում նշեցինք
«Ջիհան նյումա»-ն շարագրված է մինչև 17-րդ դարը գոյություն
ունեցող աշխարհագրական ու մասամբ պատմական երկերի ու-
սումնասիրության հիման վրա: Աղբյուրների շարքում, որոնք Քյա-
թիբ Չելեբին օգտագործել է «Ջիհան նյումա»-ն շարագրելիս, հի-
շատակվում են մեծ մասամբ արաբական, պարսկական և թուրքա-
կան աշխարհագրական երկերը, նաև եվրոպացի գիտնականների
աշխատությունները: Բոլոր աղբյուրները անհրաժեշտ ծանոթա-
գրություններով թվարկված են «Ջիհան նյումա»-ի առաջարանում
հետևյալ հաջորդականությամբ¹²:

1) Զաքարիա Իրն Մուհամմեդ Կազվինի՝ «Ասար ալ-բիլադ վա
ահբար ալ-իրադ» և «Աջաիր ալ-Մահլուքաթ»:

¹² Տե՛ս «Ջիհան նյումա», էջ 8—14:

- 2) Մուհամմեդ իբն Ահմեդ ալ-Մուկադդասի՝ «Ահսան աթ-թա-կասիմ ֆի Մարիֆատ ալ-ակալիմ»:
- 3) Գերհարդ Մերկատորի «Atlas Minor»-ը, որի թուրքերեն թարգմանությունն է՝ «Լավամիտ ան-նուր ֆի զուլմատ Ատլաս մի-նուր»:
- 4) Աբրահամ Օրթելիոսի աշխարհագրությունը՝ «Atlas Major»:
- 5) Սիփահի զադե Մուհամմեդ էֆենտի՝ «Աուդահ ալ մասալիթ իլա մարիֆատ ալ-բուլղան վա-լ-մամալիթ»:
- 6) «Թարիհ ալ-Հինդ ալ-Գարրի»:
- 7) Մուստաֆա իբն Ալի՝ «Թուհֆատ ազ-զաման վա հարիդատ ալ-ավան»:
- 8) Աբու-Ֆիդա՝ «Թակվիմ ալ-բուլղան»:
- 9) Պտղոմիոսի «աշխարհագրության» արաբերեն թարգմանու-թյունը:
- 10) Ջայն ազ-դին Օմար իբն Մուզաֆֆար իբն Վարդի՝ «Հարի-դատ ալ-աջաիր»:
- 11) Աբու-Աբդալլահ Մուհամմեդ իբն Աբու ալ-նուր ալ-Հիմայ-րի՝ «Ար-բաուդ ալ-միթար ֆի հարար ալ-աթթար»:
- 12) Սուլեյման իբն Ահմեդ ալ-Մահրի՝ «ալ-Ումդա ալ-մահրի-յա», «Թուհֆատ ալ-ֆուհուդ ֆի թամհիդ ալ-ուսուլ», «Քիթաբ ալ-մինհաջ ալ-ֆահիր ֆի իմ ալ-բահր ազ-զահիր»:
- 13) Սիդի Ալի զադե՝ «Մուխիդ»:
- 14) Անանիա Լորենցյայի և Կոստանիայի՝ «Աշխարհագրու-թյունը»:
- 15) Խալիլ իբն Շահին ազ-Ջահիրի՝ «Քաշֆ ալ-մամալիթ»:
- 16) Քիթաբ մասալիթ վա-լ-մամալիթ», — Այս վերնագրի տակ Քյաթիր Չելեբին թվարկում է արաբերեն և պարսկերեն լեզուներով դրված հետևյալ հեղինակների աշխատությունները. Ահմեդ իբն Սախլ ալ-Բալխի, Սալիդ իբն Ալի ալ-Ջուրջանի, ալ-Մասուդի, Աբու-Ուբայդա ալ-Բաքրի, Հասան իբն Ահմեդ ալ-Մուհալլաբի, իբն Սալիդ ալ-Մադրիթի, իբն Խաուսվալ, Ահմեդ ալ-Ուզրի, Աբու ար-րահիմ Մեշխեդի:
- 17) Յակուտ ալ-Համավի՝ «Մուշամ ալ-Բուլղան»:
- 18) Մուհամմեդ Աշըք՝ «Մանադիր ալ-ավալիմ»:
- 19) Շերիֆ Մուհամմեդ բին Մուհամմեդ ալ-Իդրիսի՝ «Նուզ-հատ ալ-մուշ թաք ֆի խթիրաթ ալ-աֆաթ»:
- 20) Ամին Մուհամմեդ Ռազի՝ «Խաֆա իբլիմ»:

21) Համդալլահ Ղազվինի՝ «Նուզհատ ալ-Քուլուբ»¹⁴։

«Ջիհան նյումա»-ի հետազոտողներ՝ Յրանց թեշնեբը և Ի. Յու. Կրաչկովսկին ժամանակին նշել են, որ «Ջիհան նյումա»-ի ուսումնասիրության մեջ կարևորագույն խնդիրներից մեկը համարվում է այն, որ ի հայտ բերվեն Քյաթիր Զեյեբիի գրչին պատկանող և նրա նախորդներից փոխ առնված նյութերը¹⁵։ Այդ խնդրի իրագործումը իհարկե չի առնչվում մեր թեմայի հետ, սակայն մենք կաշխատենք հայտարարել և վերլուծել այն աղբյուրները, որոնք օգտագործվել են Քյաթիր Զեյեբիի կողմից Հայաստանի պատմական աշխարհագրությունը շարադրելիս։

«Ջիհան նյումա»-ի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բացի առաջարանում նշված աղբյուրներից, տեքստում հիշատակվում են նաև այլ աղբյուրներ¹⁶։ Այսպես, որպես աղբյուր 41-րդ գլխի համար օգտագործված են նաև հետևյալ աշխատությունները. Շեքեֆ խան Բիթլիսիի՝ «Շեքեֆ-նամե»-ն, Աշ-Շարիշիի՝ «Մակամատ»-ը, Այնը Ալի էֆենդիի՝ «Կավանինի ալ-ի Օսման»-ը և Կոչ-նիշանջիի՝ «Թարաքատ ալ-մամալիք»-ը։ Բացի նշված աշխատություններից Քյաթիր Զեյեբին հանդես է եկել նաև իր անձնական հուշերով, որոնք լույս պատմական բնույթ են կրում կապված սուլթան Մուրադ IV-ի արևելյան արշավանքի հետ, որին մասնակից է եղել Քյաթիր Զեյեբին¹⁶։

Քյաթիր Զեյեբիի օգտագործած աղբյուրների շարքում աչքի ընկնող տեղ է զբաղում պարսիկ պատմաբան և աշխարհագրագետ՝ Համդալլահ Ղազվինիի «Նուզհատ ալ-Քուլուբ» (Սրտի զվարճանք) աշխատությունը, գրված՝ 1339 թ.։ Այստեղ մի շարք երկրների նկարագրության հետ մեկտեղ բերվում է մոնղոլա-պարսկական պետության, կենտրոնական կառավարության կողմից սահ-

¹³ Նշված աղբյուրները մանրամասն ուսումնասիրվել են ահադ. Ի. Յու. Կրաչկովսկու կողմից, «Արարական աշխարհագրական դրականություն» աշխատության մեջ։

¹⁴ «فرائج تدهشندر» عثمانلييلرد جوغرافيه، توريكات مجموععاسي، И. Ю. Крачковский, Избр. соч., стр. 618). جلد ۲، استانبول ۱۳۳۸ھ

۱۹ ص ۲۹۹

¹⁵ Այստեղ անհրաժեշտ է մատնանշել մի շարք ուսումնասիրողների խոր մտլորվածությունը, քանի որ նրանք հաստատում են թե, իբր Քյաթիր Զեյեբին իր երկի առաջարանում թվարկած աղբյուրներից բացի այլևս չի վկայակոչել որևէ այլ հեղինակի աշխատություն։ Դա ճիշտ չէ։ «Ջիհան նյումա»-ի բնագիրը խառաբղետ է բազմաթիվ հեղինակների անուններով և աշխատություններով, որոնցից Քյաթիր Զեյեբին կամ էլ նրա նախորդները փոխ են առել բերված նյութերը։ (Տե՛ս И. Ю. Крачковский, Избр. соч., стр. 618.

فرائج تدهشندر، عثمانلييلرد جوغرافيه، توريكات مجموععاسي، ص ۲۹۹

¹⁶ «Ջիհան նյումա», էջ 391, 397, 408, 410, 412, 417, 418.

մանված Անդրկովկասի վարչական բաժանումը (1254/55), ինչպես նաև տնտեսա-աշխարհադրական կարգի բավականաչափ տվյալներ և տեղեկություններ հարկային սխեմանի մասին:

Մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ քաղվածքներ, բերված Քյաթիր Զեյբերի կողմից, վերարտադրված են անշշան փոփոխություններով համարյա թե բառ առ բառ, բայց առանց որևիցե քննադատական վերլուծության: Որպեսզի ցույց տանք թե ինչ աստիճանի բարեխիղճ է գտնվել Քյաթիր Զեյբերին օգտագործված աղբյուրների նկատմամբ, ստորև բերում ենք մի հատված «Ջիհան նյումա»-ից ղուզահեռարար պարսկերեն բնագրի հետ.

Թուրքերեն տեքստ

Պարսկերեն տեքստ

حمد الله ايدر ارمن ولايتى ايكى قسمدر صغرى وكبرى وارمينيه صغرى ايرانده داخل دكددر ارمينيه كبرى اذك شرقنده روم شمالنده شام جنوبنده بحر روم غربنده در بلاد سيسى وقرسوسى وقمرس اذك معظم بلاديدر ارمينيه كبرى ايران حدنده داخل اولوب تومان اخلاط دسكله مشهور در حدودى ارمينيه صغرى وروم وديار بكر وكردستان واذربايجان وارانده پيوسته اولور طولى ارزن الرومدن سلساسه عرضى ارانندن اقصاى ولايت خلاطه منتهى دار در ملكى خلاط اولوب حقوق ديوانيه سى زمان سابقده ايكسوز تومنه قريب ايدى صكه اوتوز طقوز تومنه اندى¹⁷

در ذكر موضع ولايت ارمن وآن بر دو قسم است 'ارمينيه الاكبر وارمينيه الاصغر' وارمينيه الاصغر داخل ايران نيست وارمينيه الاكبر در شرق او افتاده است وولايات روم به شمالش وديار شلم به جنوبش ودرىاي روم در غربش وبلاد سيسى وقمرس وطبرزون معظم بلاد انجاسست 'وازانجا هر سال سه تومان بر سبيل خراج بايران ميد هند وارمينيه الاكبر داخل ايرانست وبه حساب يكتومان وبتومان اخلاط مشهورست 'هوايش اكثر معتدل 'حدودش تا ارمينيه الاصغر وروم ودياربكر وكردستان واذربايجان واران پيوسته است. طولش از ارزن الرومدن تا سلساس عرض از اران تا اقصاى ولايات اخلاط. ودارالملك ان ديار شهر اخلاط است حقوق ديوانيش در زمان سابق قرب دوپست تومان اين زمان بوده است واكثون سى ونه تومانست¹⁸

17 «Ջիհան նյումա», էջ 410:

18 حمد الله قزوینى 'نزهة القلوب' بکوشش محمد دبیر سیاقى 'تهران' 1336: ص 117

Այս հրատարակությունը իրենից ներկայացնում է դիտա-քննադատական տեքստ, կատարված շրջա ձեռագրերի հիման վրա: Գոյություն ունի նաև տեքստի անգլերեն թարգմանությունը: S. b. a Gibb memorial series, XXIII, pt. 1-2.

Համագալլա՞նը ասում է, որ Արմեն վիլայեթը բաղկացած է երկու մասից՝ Մեծ Արմենիայից և Փոքր Արմենիայից: Փոքր Արմենիան չի սահմանակցում Պարսկաստանի հետ: Իսկ Մեծ Արմենիան ընկած է նրանից արևելք, Ռումը՝ (Սեբաստիայի նահանգ) հյուսիս, Շամը՝ հարավ, Ռումի ծովը՝ (Միջերկրական ծով) արևմուտք: Սիսը, Կիպրոսը և Թարսուսը նրա մեծ քաղաքներից են: Մեծ Արմենիան սահմանակցում է Պարսկաստանի հետ և հանրահայտ է Թուման Ախլաթ անունով: Նա սահմանակցում է Փոքր Արմենիայի, Ռումի, Դիարբեքի, Քուրդիստանի, Ադրբեջանի (Աստրախտական) և Արրանի (Ադվանքի) հետ: Նրա երկարությունը ձգվում է Արզն-առ-Ռումից (Կարին) մինչև Սալմաս, իսկ լայնությունը՝ Արրան վիլայեթից մինչև Խլաթի հեռավոր [սահմանը]: Նրա մայրաքաղաքըն է Խլաթը: Նախկինում դիվանային հարկը կազմել է 200 թուման, իսկ հետագայում այն նվազել է մինչև 39 թուման:

Հիշատակություն Արմեն վիլայեթի տեղի մասին

Նա բաղկացած է երկու մասից՝ Մեծ Արմենիայից և Փոքր Արմենիայից: Փոքր Արմենիան չի մտնում Պարսկաստանի մեջ: Մեծ Արմենիան ընկած է նրանից արևելք, Ռումը՝ հյուսիս, Շամի երկիրը՝ հարավ, Ռումի ծովը՝ արևմուտք: Սիսը, Կիպրոսը և Տրապիզոնը նրա մեծ քաղաքներից են: Յուրաքանչյուր տարի այստեղից որպես խարաջ Պարսկաստանին վճարում են 3 թուման:

Մեծ Արմենիան մտնում է Պարսկաստանի մեջ: Ըստ հաշվառման նա իրենից ներկայացնում է մեկ թուման Ախլաթ¹⁹: Կլիման մեծ մասամբ բարեխառն է: Նրա սահմաններն են Ռումը, Դիարբեքի, Քուրդիստանը, Ադրբեջանը և Արրանը: Երկարություն մեր ձգվում է Արզն-առ-Ռումից մինչև Սալմաս, իսկ լայնություն մեր Արրանից մինչև Ախլաթի վիլայեթի հեռավոր սահմանը: Այս երկրի մայրաքաղաքը Ախլաթ քաղաքն է: Նախորդ ժամանակներում դիվանային հարկը կազմել է մոտավորապես՝ 200 թուման, իսկ այժմ՝ 39 թուման:

19 Մոնղոլական նվաճման ժամանակ վիլայեթները բաժանվում էին ալեյի փոքր ռազմա-վարչական միավորների «թուման» անունով: Այսինքն՝ այնպիսի շերջանի, որը բանակի համար տրամադրում էր 10.000 զինվոր: Ախլաթ քաղաքը, որը մինչև այդ հեղեղ է Շահարմենների մայրաքաղաքը կազմել է մեկ «թուման»:

Ինչպես տեսնում ենք, տեքստը համարյա բառացի թարգմանված է թուրքերենի: Այսուհանդերձ Քյաթիր Չելեբին ուշադրություն չի դարձրել օգտագործված աղբյուրի գրության ժամանակի վրա և այդ է պատճառը, որ «Ջիհան նյումա»-ում առաջացել են մի շարք թյուրիմացություններ: Օր. հարկային սիստեմի բոլոր թվերը, որոնք բերված են «Ջիհան նյումա»-ում, վերցված են «Նուզհատ ալ-Քուլուբ»-ից: Բայց չէ որ այս աղբյուրը կապված է մոնղոլական արշավանքի հետ և ոչ մի առնչություն չունի 17-րդ դ. Օսմանյան կայսրության հարկային սիստեմի հետ:

Տարակուսանք է առաջանում նաև վարչական բաժանման մեջ. Քյաթիր Չելեբին 410 էջում նշում է, որ Կարսի վիլայեթը մտնում է Մեծ Հայքի սահմանների մեջ, մինչդեռ Կարսի նկարագրությունը տրված է Վրաստանի բաժնում, այսինքն՝ պարզապես հիմնված է «Նուզհատ ալ-Քուլուբ»-ում բերված վարչական բաժանման վրա²⁰:

Եթե 14-րդ դ. Համդալլահ Ղազվինին գրել է, որ «Սիսը Թարսուսը և Կիպրոսը նրա (Հայաստանի) ամենամեծ քաղաքներից են», դա հասկանալի է: Չէ՞ որ Սիսը 12—14-րդ դդ. եղել է Կիլիկիայի հայկական թագավորության մայրաքաղաքը, իսկ Կիպրոսը որոշ ժամանակով քաղաքականապես ենթարկվել է նրան: Բայց երբ Քյաթիր Չելեբին գրում է, որ «եներկայումս նրանց (հայերի) մայրաքաղաքը Սիսն է», չի համապատասխանում իրականությանը: 17-րդ դ. Սիսը, Թարսուսը և Կիպրոսը մտնում էին առանձին վարչական միավորի կազմում՝ Կիպրոսի վիլայեթի մեջ²¹:

Սիսնույն բովանդակությունը ունեցող պարսկերեն ու թուրքերեն տեքստերի համակարգային համեմատությունը ի հայտ է բերում բավականաչափ տարբերցվածքներ, հատկապես հարկային վճարումների թվերի մեջ:

20 Տե՛ս «Նուզհատ ալ-Քուլուբ» էջ. 108: Համդալլահ Ղազվինիի մոտ Վրաստանի նկարագրության բաժնում ընդգրկված է նաև Բագրատունիների հայկական թագավորության մայրաքաղաքը՝ Անին (961—1045): Այս պատահական չէ: Մոնղոլական նվաճման ժամանակ Հայաստանի և Վրաստանի երկրամասերը բաժանվել էին երկու վիլայեթների. 1) Գյուրջիստանի վիլայեթ, 2) Մեծ Արմենիայի վիլայեթ: Գյուրջիստանի վիլայեթը իր մեջ ընդգրկում էր նաև Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանը, այսինքն՝ այն մասերը, որոնք Թամար թագուհու իշխանության շրջանում (1184—1213) գտնվում էին վրացական տիրապետության ներքո:

21 عین علی افندی، قوانین ال عثمان در خلاصه مضه مین دفتر دیوان، استانبول، ۱۰۱۸، ص ۲۱

Տե՛ս նաև 1653 թ. Ալի Չաուշի կազմած ցուցակը (A. C. Тверитинова, Аграрный строй Османской империи XV—XVII вв. М., 1963, стр. 98).

կանակաժից վեր է, որ այս հանրահայտ քաղաքների անունները և դիվանային հարկերի թվերը ճիշտ են բերված միայն պարսկերենի ընագրում:

Մեղ թվում է, որ տեքստերում առկա այս և այլ տարընթերցվածքները գոյություն ունեցել են (մի գուցե ընդօրինակողի անպիտուկության հետևանքով) այն օրինակում, որը Իբրահիմ Մյուսթեֆերիկյան հիմք է ընդունել իր հրատարակության մեջ, սակայն առանց որևիցե քննադատական վերլուծության և տարբեր օրինակների համեմատության: Հնարավոր է նաև, որ այս սխալները արդյունք են տպագրական շարվածքի՝ օր. «բե»-ի (ب) փոխարեն շարված է՝ «թե» (ث) կամ վեցի (٧) փոխարեն երկու (٢) և այլն:

Վանի վիլայեթի քաղաքների նկարագրության ընթացքում Քյաթիր Զեյնեին լայնորեն օգտագործել է Շեքեֆ խան Բիթլիսիի պատմական երկը՝ «Շեքեֆ նամե»-ն, գրված պարսկերեն լեզվով 1596 թ.²⁴ Քյաթիր Զեյնեին այս գրքից կատարել է տառացի քաղվածքներ կրճատումներով, փակ երբեմն էլ տեքստի ինքնուրույն մշակումով: Այսպես, ամբողջությամբ քաղվածաբար բերված են Բաղեշի, Խլաթի, Մուշի, Խնուսի, Սուրմանաբադի, Խոշաբի, Բայանի, Խիղանի նկարագրությունները և մի շարք պատմական հաղորդումներ Վան քաղաքի և նրա վիլայեթի այլ շրջանների մասին, այն տարբերությամբ, որ փոխ առնված նյութերը տրված չեն աղբյուրում գոյություն ունեցող հաջորդականությամբ: Օր. «Շեքեֆ-նամե»-ում առաջինը նկարագրվել է Բաղեշը, իսկ «Ջիհան նյումա»-ում Խլաթը: Տեղափոխություն է նկատվում նաև հենց տեքստի բովանդակության մեջ²⁵:

Որպեսզի ցույց տանք «Շեքեֆ նամե»-ից փոխ առնված և տեղափոխված նյութերը, զուգահեռաբար բերում ենք համապա-

²⁴ «Շեքեֆ նամե»-ի պարսկերեն ընագիրը առաջին անգամ հրատարակել է ուսարեկագետ Վ. Վելյամինով-Զերնովը: Տե՛ս Schéref-nâmeh ou histoire des kourdes par Schéref, prince de Bidlis, publiée par V. Vellaminof-Zernof, texte pers., vol. I—II, SPb. 1860—1862. Գոյություն ունի նաև Շարմուայի ֆրանսերեն թարգմանությունը: Տե՛ս Chéref-nâmeh ou fastes de la Nation Kourde par Chéref-ouddine, traduits et commentés par F. E. Charmoy, vol. I—II, SPb. 1868—1875. Մեր համեմատությունը «Ջիհան նյումա»-ի տեքստի հետ կատարված է հանրեւում նոր հրատարակված: میر شرف خان بدلیسی 'شرفنامه' 'قاهره' 1911 հետ:

²⁵ Համեմատիր «Ջիհան նյումա»-ի հետևյալ հատվածները, էջ 413, 414, 416, «Շեքեֆ նամե»-ի 444, 454, 460, 461 էջերի հետ:

Թուրքերեն տեքստ

Պարսկերեն տեքստ

بعده اول گذرگاهده بر شهر ومتين
قلعه بناسی فرمان ایددی که بنم
کمی بر پانشاه تسخیرندن عاجز اوله
دیجک بدلیس نام غلام چشمه مزدوره
ایکی فرسخ یرده کسور چایی اینله
رباط اراسنده بر حصار متین بنا
ایلدیکه الی الان اول کفر گاهده سد
سدیدر چونکه قلعه بدلیس مثلث
الشکل واقع اولشدر هر بار اضطراب
وانقلابدن خالی دکلدر حتی اسکندر
ایرانندن دوشده بدلیس اظهار
عصیان ایدوب یول ویرمدی .²⁶

بنابر موافقت آب وهوای آنچه
بخطر اسکندر میرسدکه شهر و قلعه
بناکند که قرنه بعد قرن و پنده بعد
بطن از ان باز کویند بدلیس نام
غلام خود میفرمایندکه در اینجا قلعه
وشهری بنا نماید ودر متانت
وحصانت بنوعی اقدام می باید کرکه
اگر مثل من پادشاهی اراده تسخیر
ان کند کند مقصود بکنکره کاخش
نرسد . بدلیس حسب فرمان
قضا جریان بتعمیر قلعه و عمارت
حصار مبادرت نموده . قریب بدو
فرسخی چشمه در مابین رود خانه
کسور و رباط در موضعی که الحال جای
قلعه و قصبه بدلیس است بنا کرده
باندک فرصتی با تمام میرساند ...²⁷
و چون هیأت مجموعی قلعه بدلیس
مثلث افتاده بواسطه ان دایم
الاقوات از اضطراب و انقلاب خالی
نیست ...²⁸

و در محلی که اسکندر از سفر ایران
عودت کرده بد اینجا میرسد بدلیس
در قلعه و حصار را استوار کرده آماده
جنگ وجدال و مستعد حرب و قتال
شده کردن از طوق اطاعت و فرمان بر
داری کشیده .²⁹

²⁶ «Ջիհան նյուամ», էջ 213—214:

²⁷ «Շերեֆ նամե», էջ 443:

²⁸ Նույն տեղում, էջ 444:

²⁹ Նույն տեղում, էջ 443:

Այնուհետև նա (Ալեքսանդր Մակեդոնացին) հրամայեց այդ լեռնանցքում կառուցել քաղաք և մի անառիկ բերդ, որոպեսզի մինչև անդամ այնպիսի փաղիշահ, ինչպիսին ես եմ, չկարողանա զրավել այն»։ Բիթլիս անունով ծառան հիշյալ աղբյուրից Ձ փարսախ հեռավորության վրա, Կեսուր և Ռաբաթ գետերի միջև կառուցեց մի անառիկ բերդ, որը մինչև այսօր ամուր կանգնած է այդ անցքում։ Չնայած, որ Բիթլիս բերդը կառուցված է եռանկյան ձևով, այսուհանդերձ այն զերծ չի եղել [ներքին] խռովություններից և ապստամբություններից։ Նույնիսկ, [սլատահել է այնպես], որ Խքենդերը Պարսկաստանից վերադառնալիս, Բիթլիսը ապստամբություն է բարձրացրել և հրաժարվել է նրան ճանապարհ տալ։

Այդ [տեղերի] բարենպաստ կլիմայի համար Խքենդերը մտահեղացավ կառուցել մի քաղաք և բերդ, որպեսզի դրանց մասին խոսվեր դարե-դար և սերնդեսերունդ։ Նա հրամայեց Բիթլիս անունով իր ղուլամին կառուցել այդ տեղերում մի քաղաք և բերդ, և ջանար, որպեսզի դրանք ունենային այնպիսի ամրություն և անձեռնմխելիություն [ինչպես ինքն էր ասում]՝ «Եթե իմ նման որևիցե կայսր իդձ ունենա նվաճելու այն, թող որ նրա ցանկության օղաթկը չհասնի սլարսպի ատամներին»։ Համաձայն [Խքենդերի] հրամանին Բիթլիսը հապճեպ ձեռնամուխ եղավ բերդի և նրա ամրությունների կառուցմանը։ Նա հիմնադրեց [այն] մոտավորապես աղբյուրից Ձ փարսախ հեռավորության վրա, Կեսուր և Ռաբաթ գետեմիջև, այն տեղում, որտեղ ներկայումս գտնվում է Բիթլիսի բերդը և Կասաբան, և ավարտեց այն կարճ ժամանակում (էջ 443)։

Եվ չնայած, որ Բիթլիսի բերդը կառուցվել է եռանկյան ձևով, (այսինքն այն դրսից եղել է անառիկ և անձեռնմխելի—Ա. Փ.) այսուհանդերձ այն զերծ չի եղել ներքին խռովություններից և ապստամբություններից։ (էջ 444)։

Երբ Խքենդերը վերադարձավ Պարսկաստանի արշավանքից և հասավ այնտեղ, Բիթլիսը ամրաց-

րեց բերդի դարբասն ու պարիսպ-
ները և նախապատրաստվեց դի-
մադրել և նախատամարտ տալ.
հրաժարվեց ենթարկվել և հալա-
տակություն ցույց տալ (443):

Հիմնականում Քյաթիր Չելերին «Շերեֆ նամե»-ից բերված
քաղվածքները հաղորդել է ճշգրտությամբ, սակայն ըստ հրևույթին
փոխ առնված նյութերի մի քանի տեղերը կատարվել են անուշադիր,
որը և հասցրել է տեքստի մասնակի աղավաղման:

Քուրբեքեն տեքստ

منقولدرکه سلفده انده مار بسیار
ایدی حکمان بری درگاه قلعهده
سنگ تراشیده دن بر مار شکنی
طلسم ایدوب قودقندن صکره کورغمز
اولدی ...

قصبه مزبوره اذربيجان ايله ديا رېكر
ورېيعه وارمن اراسنده بر درېنډر
ترکستان وایران وخراسندن حجاز
وشام طرفنه كيدنلر لایډ انك دلکلی
قیاسندن كچرلر غیرى یول یوقدیر
یاخود طولاشقدیر اول سنك سوارخ
بتلیسدن بر فرسغ جنوب طرفنه
دوشر .³⁰

Պարսկերեն տեքստ

واز ثقاب روات مرویست که در
ازمنه سابقه مار بسیار در قلعه
پیدا شده سکان ومتوطنان آنجا را
از کثرت حیه تعیش بد شواری بوده
آخر الامر حکما در درگاه قلعه
طلسمی تعبیه نموده اندکه مار
کمتر کشته مزاحم مردمان نمیشود .
والحال بشکل امی که مار در دست
دارد از سنك تراشیده در روی دیوار
نمایا نست و بطلسم درگاه اشتهار
دارد . وقصبه بدلیسی در بنیدیست
در مابین اذربيجان وديار بكر ورېيعه
وارمن که اگر حاجیان ترکستان
وهندوستان از ایران وعراق
وخراسان بزیارت حرمین الشرفین
زادهما الله تعالی تشریفا وتعظیما
توجه فرمایند . واکر سیاحان جدہ
وزنکبار وقاجران خطا وختن وروس
وستقلاب وبلغار وسوداگران عرب وعجم
وروند کان اکثر عالم تردد نمایند
مادامی که از سنك سوارخ بدلیسی
مرور وهبور نکنند مسیر نیست .³¹

³⁰ «Ջիհան նյումաս», էջ 414:

³¹ «Շերեֆ նամե», էջ 444—445:

Պատմում են, որ անցյալում
այնտեղ (Բիթլիսում) դոյություն
են ունեցել անհամար թվով օձեր։
Իմաստուններից մեկը որպես թա-
լիսման բերդի ճակատին քարից
քանդակել է մի օձ։ Դրանից հետո
[օձերը] այլևս չեն հայտնվել։

Հիշյալ քաղաքը իրենից ներկա-
յացնում է մի լեռնանցք Ադրե-
շանի, Դիարբեքիի, Ռաբիայի և
Արմենիայի միջև։ Նրանք, ո-
րոնք Թուրքեստանից, Պարսկաս-
տանից, Խորասանից ուղևորվում
են դեպի Հիշադ և Շամ, ստիպ-
ված են անցնել ժայռի անցքով,
հակառակ դեպքում պետք է շր-
ջանցեն այն։ Այլ ճանապարհ դո-
յություն չունի։ Այդ ժայռի անցքը
գտնվում է Բիթլիսից հարավ՝ մեկ
փարսախ հեռավորության վրա։

Ըստ արժանահավատ պատ-
մողների՝ հայտնի է, որ անցյա-
լում բերդում եղել են շատ օձեր։
Օձերի շատությունից տեղի բնա-
կիչները և նորեկները վատ են
ապրել։ Ի վերջո իմաստունները
բերդի դարբասի վրա տեղադրել
են մի թալիսման, որպեսդի օձե-
րը նվազեն և մարդկանց դժվա-
րություն չհարուցեն։

Հիմա էլ պարսպի վերևում երե-
վում է քարից տաշված մի մարդ-
կային կերպարանք, որը իր ձեռ-
քում բռնել է մի օձ։ Այն հայտնի
է, որպես դարբասի թալիսմանը։

Բիթլիսի Կասաբան իրենից
ներկայացնում է մի լեռնանցք
Ադրեշանի, Դիարբեքիի, Ռա-
բիայի և Արմենիայի միջև։ Այն-
պես որ, եթե Թուրքեստանի և
Հինդուստանի ուխտավորները
Պարսկաստանի, Իրաքի և Խորա-
սանի միջով ուխտի դնան դեպի
նվիրական քաղաքներ՝ [Մեքքա և
Մեդինա],— ա՛հ որ ամենաբար-
ձրյալն աստված բաղմասպատկի
նրանց հարգանքն ու մեծարու-
մը— նվ եթե Ջիդդայի և Ջանդե-
բարի ուղևորները, Խաթայի, Խո-
թանի, Ռուսի, Սակլաբի և բովկա-
րի վաճառականները, արաբի,
աջեմի վաճառականները և աշ-
խարհի մեծ մասի ճամփորդները
ուղևորություն կատարեն, անկա-
րելի է, որ նրանք չանցնեն Բիթ-
լիսի քարե ժայռի միջով։

«Զիհան նյումա»-ում բազմիցս հիշատակվում է՝ «նվաստա նշում է» կամ «Մի պատմության մեջ ասում են» արտահայտությունները, որոնք միշտ չէ որ վերագրվում են Քյաթիր Չելեբիին։ Այդ արտահայտությունների հեղինակը Շերեֆ-խանն է որից փոխ է առնված համապատասխան բաժինների նյութերը։

Քյաթիր Չելեբիի օգտագործած մյուս աղբյուրների մեջ, ըստ փոխ առնված նյութերի ծավալին, առավել կարևոր տեղ է գրավում հուշակավոր արաբ աշխարհագրագետ Աբու-լ-Ֆիդայի (1273—1331) «Թաակիմ ալ-Բուդան» («Երկրների կարգավորում») աշխատությունը³²։

Հայտնի է, որ 8-րդ դ. սկզբին Արաբական խալիֆայի Անդրկովկասյան երկրներից նվաճված երկրամասում սահմանեց նոր վարչական բաժանում, որի հետևանքով Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը կազմեցին մեկ լայնարձակ վարչական միավոր էրմենիա (կամ Արմենիա) անվան տակ։ Այս անվանումը արաբական աշխարհագրագետները սկսեցին գործածել նոր բովանդակությամբ։

Աբու-լ-Ֆիդան, մյուս արաբ աշխարհագրագետների նման Հայաստանը նկարագրում է Վրաստանի, Ադրբեջանի (Ատրպատական) և Աղվանքի հետ։ Սակայն քաղաքների նկարագրության ընթացքում նա ստույգ նշում է, թե որ երկրին է պատկանում այս կամ այն քաղաքը։ Օր. Թիֆլիսը «Թաակիմ ալ-բուդան»-ի մեջ նրկարագրված է ընդհանուր բաժնում, բայց ցույց է տրված նաև, որ այն վրացական քաղաք է, Բեյլեկանը (Փայտակարան) աղվանական, իսկ Բերդան և Սուլթանիեն՝ ադրբեջանական³³։ Ըստ երևվույթին Քյաթիր Չելեբին խորամուխ չի եղել այս ժանոթագրություններին, քանի որ Հայաստանի քաղաքների հիշատակության մեջ, նա անվանում է նաև վերոհիշյալ քաղաքները։

Ընդհանուր առմամբ տեքստերի համեմատությունը ցույց է տալիս, որ փոխ առնված նյութերը վերարտադրված են համարյա թե բառ առ բառ աննշան կրճատումներով։

³² M. Reinaud, et de Slane M. G., Géographie d'Aboulféda, texte arabe, Paris, 1840. Գոյություն ունի նաև բոլոր նյութերի ֆրանսերեն թարգմանությունը։ Տե՛ս M. Reinaud, Géographie d'Aboulféda, traduite de l'arabe en français, t. 1—2, Paris, 1848. Guyard S., Géographie d'Aboulféda, traduite de l'arabe en français, t. 2, seconde partie, Paris, 1883.

³³ Տե՛ս «Թաակիմ ալ-բուդան», էջ 353, 355, 357։

موش تقويمه بر طاعك ديبنده دوز
يرده بر وادی اغزنده بلده صغيره در
صحراسی غایت واسع ایکی مرحله
مسافه اولوب موش اوواسی دیمکنه
مشهوردر³⁴

وعن بعض اهل تلك البلاد وموش
بلدة صغيرة بغير سور وهي في ذيل
جبل في قم واد ولها وطأة عظيمة
تعرف بصحراء موش مسيرة يومين
وبها مروج ومراع وموش عن ميفارقين
على نحو مرحلتين وعن خلاط على نحو
ثلث مراحل³⁵

Թարգմանութիւն

Թարգմանութիւն

Մուշը ըստ «Թակվիմ [ալ-բուլ-
դան]-ի» փոքր քաղաք է, որը
գտնվում է լեռան ստորոտում,
հարթ տարածության վրա, գետի
հունի մոտ: Նրա հարթավայրը
հույժ լայնարձակ երկու օրվա
տևողությամբ ճանապարհ է և
հայտնի է «Մուշ օվասը» (Մուշի
հովիտ) անունով:

Այս քաղաքի բնակիչների պատ-
մածի համաձայն, Մուշը առանց
պարիսպների փոքր քաղաք է, որը
գտնվում է լեռան ստորոտում
հարթ տարածության վրա, գետի
հունի մոտ: Նրա հարթավայրը
հույժ ընդարձակ երկու օրվա տե-
վողությամբ ճանապարհ է և
հայտնի է «Մուշ օվասը» (Մուշի
հովիտ) անունով: Մուշը գտնվում
է Միաֆարկինից երկու իսկ խա-
թից երեք օրվա հեռավորության
վրա:

Թարգմանութիւն տեքստ

Արաբերէն տեքստ

وسطان تقويمه واندى بر مرحله
قدر جنوبه وشرقه دوشر بحيره
کنارنده دوز يوده بر بلده در واوه انده
نهایت بولور اوتھسی کردستان
طاغريد ر دیو یازا³⁶

وعن بعض اهل تلك البلاد ووسطان
بين الشرق والجنوب عن وان
وبينهما اكثر من مسيرة يوم ووسطان
على حافة بحيرة ارجيش من اخر
الوطأة واول الجبل قال المهلبی
ووسطان من بلاد ارمينية وبينها
وبين سلمات ثلثة عشر فرسخا وبين
وسطان وبين وان ستة فراسخ³⁷

34 «Ջիհան-նյումա», էջ 416:

35 «Թակվիմ ալ-բուլդան», էջ 393:

36 «Ջիհան-նյումա», էջ 417:

37 «Թակվիմ ալ-բուլդան», էջ 397:

Ոստան «Թափվիմ [ալ-բուլ-գանա-ում] գրված է, որ քաղաքը գտնվում է հարթ տարածության վրա լճի ափին, Վանից հարավ-արևելք մի օրվա հեռավորության վրա: Հարթավայրը վերջանում է այնտեղ, իսկ մյուս կողմում Քուր-դիստանի լեռներն են:

Այս քաղաքի բնակիչների պատմածի համաձայն, Ոստանը գտնվում է Վանից հարավ-արևելք ավելի քան մեկ օրվա հեռավորության վրա: Ոստանը ընկած է Արճեշ լճի ափին, այնտեղ, որտեղ վերջանում է հարթավայրը և սկիզբ են առնում լեռները: Ալ-Մուհալլաքիի ասածների համաձայն Ոստանը Հայաստանի քաղաքներից մեկն է: Ոստանը գտնվում է Սալմաստից տասներեք, իսկ Վանից վեց փարսախ հեռավորության վրա:

Անհրաժեշտ է նշել, որ «Ջիհան նյումա»-ում տեղ են գտել որոշ անճշտություններ, որոնք վկայում են Քյաթիր Չելեբիի և օգտագործված աղբյուրների հեղինակների սահմանափակ պատկերացումների մասին: Քյաթիր Չելեբին հաճախ տեղեկություններ է բերում վաղ շրջանի աղբյուրներից առանց որևիցե ուղղումներ մտցնելու նրանց մեջ: Այսպես, Հայաստանի սահմանները նկարագրելիս Քյաթիր Չելեբին նշում է, որ «ներկայումս Մեծ Արմենիան բաղկացած է Վանի, Կարսի և էրզրոմի վիլայեթներից, իսկ Փոքր Արմենիան՝ Ադանայի և Մարաշի վիլայեթներից»³⁸:

Ինչպես հայտնի է Մեծ և Փոքր Հայքի բաժանումը կապված է հայ ժողովրդի վաղ շրջանի պատմության հետ: Սելևկյանների տիրապետության ժամանակ (4-րդ դարի վերջերից մինչև 2-րդ դարի սկզբները մ. թ. ա.) Հայաստանը բաղկացած էր երեք մասերից՝ 1) Փոքր Հայք, 2) Մեծ Հայք, 3) Մոփք: Սելևկյանների տիրապետության անկումից հետո նրանից բաժանվեցին Մեծ Հայքը և Մոփքը, որովհետև նրանց կառավարիչները՝ Արտաշեսը և Ջարհուրիենց անկախ հռչակեցին³⁹:

Սրանցից ամենամեծ և հզոր պետությունը Մեծ Հայքն էր, որտեղ համարյա վեց դար թագավորում էին նախ Արտաշեսյանների՝

³⁸ «Ջիհան նյումա», էջ 410:

³⁹ S. S. Страбон, География, М., 1964, стр. 498.

ապա Արշակունիների դինաստիան (189 թ. մ. թ. ա. 428 մ. թ.): Տիգրան II-ի տիրապետության (95—56 թթ. մ թ. ա.) շրջանում, երբ Մեծ Հայքը հասել էր իր ամենաբարձր հզորության, Մովսես միանում է Մեծ Հայքին:

«Ջիհան նյումա»-ում ճիշտ չէ պատկերված Մեծ Հայքը, որովհետև բոլորովին մոռացության է տրված Արևելյան Հայաստանը: Քյաթիր Չելեբին, ինչպես վերը նշեցինք, Հայաստանը նկարագրելիս նկատի է ունեցել միմիայն Արևմտյան Հայաստանը: Բացի այդ, 17-րդ դարում Արևմտյան Հայաստանի տերիտորիայում մտնում էին ոչ թե հրեք, այլ հինգ վիլայեթ՝ Վանը, Կարինը, Կարսը, Դիարբեքիրը, Չըլդերը և մի քանի քրդական հյուսիս-մետներ:

Նկատի առնելով Քյաթիր Չելեբիի և Համդալլահ Ղազվինիի Հայաստանի վարչական բաժանման տվյալները, անհրաժեշտ է տարբերել վաղ շրջանում գոյություն ունեցող Փոքր Հայքը Կիլիկիայի «Փոքր Հայքի» հետ, որը հիմնվեց 1080 թ. և գոյատևեց մինչև 1375 թ.:

Հատինական ժամանակագիրները և միջնադարի այլ պատմագիրներ Կիլիկիայի հայկական թագավորությունը անվանում էին «Փոքր Արմենիա», իսկ երբեմն էլ պարզապես «Արմենիա» (Armenia minor, Armenia): Կիլիկիայի հայկական թագավորության շրջանի հայկական աղբյուրները Կիլիկիան անվանում էին «Աշխարհ» կամ «Տուն», «Կիլիկիայի աշխարհ», կամ «Հայկական աշխարհ» ինչպես նաև «Սիսվան»⁴⁰:

Անհրաժեշտ է նշել, որ արաբ աշխարհագրագետները նույնպես որոշակի պատկերացում ունեին Կիլիկիայի հայկական թագավորության մասին: Արաբները Կիլիկիայի հայկական թագավորությունը հաճախ անվանում էին «Սիսի երկիր»: Յակուտ ալ-Համաւիլին (1178—1229) հիշատակում է այն որպես «հայոց սուլթան իրն կալոնի երկիր» կամ պարզապես «Իբն կալոնի երկիր»⁴¹:

Ինչ վերաբերում է Կիլիկիայի հայկական թագավորության երկրամասին, ապա այն կազմվել էր բուն Կիլիկիայից և նրա սահմանամերձ մարզերից:

«Ջիհան նյումա»-ում Մարաշի վիլայեթի կազմում հիշատակվում են այնպիսի քաղաքներ, որոնք երբեք չեն ընդգրկվել նրա

40 Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, стр. 5—6.

41 Հ. Թ. Ն ա լ Ր ա ն դ յ ա ն, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965, էջ 45, 83, 100, 120:

մեջ: Ինչպես օր. էլբիստանը, Այնթաբը, Մալաթիան, Կախտան և այլն: Անհրաժեշտ ուշադրություն չի հատկացված Կիլիկիայի արևմտյան հատվածի նկարագրությանը: Մարաշի և Ադանայի վիլայեթների նկարագրությունները, որտեղ վարչական բաժանումը վերաբերվում է 17-րդ դ., լրիվ պատկերացում չի տալիս Կիլիկիայի ամբողջական երկրամասի մասին: Կիլիկիայի հայկական թագավորությունը Միջերկրական ծովի ափին ավելի ընդարձակ տարածություն ուներ, քան այն ցույց է տրված «Ջիհան նյումա»-ում:

Նշենք նաև այն մասին, որ Քյաթիր Զեյեբին մոռացության է տվել Հայաստանի մի շարք հանրահայտ քաղաքների և բերդերի նկարագրությունը՝ (Ինչպես Անի, Օլթին, Քանիսան և այլն), որոնց մասին խոսվում է թե արաբական և թե պարսկական աղբյուրներում:

«Արմենիա երկրի մասին» գլխում Դվինը և Դերիլը համարվել են տարբեր հայկական քաղաքներ. նույնիսկ Դերիլը (էջ 418) ընդգրկվել է Վանի վիլայեթի նկարագրության մեջ: Մինչդեռ Դերիլն ու Դվինը միևնույն քաղաքի անվանումներն են: Դվինը հայկական անվանումն է, իսկ Դերիլը՝ արաբական: Դվինը պատմականորեն երբեք չի մտել Վանի վիլայեթի մեջ: 17-րդ դարում այն մտնում էր Երևանի խանության կազմի մեջ:

«Ջիհան նյումա»-ի քարգմանությունները. «Ջիհան նյումա»-ի առանձին գլուխներ թարգմանվել են տարբեր լեզուներով: Ի. Համմերը գերմաներենի է թարգմանել Բալկանյան թերակղզու երկրներին վերաբերող նյութերը⁴²: Նա իր թարգմանության համար օգտագործել է «Ջիհան նյումա»-ի ձեռագրի առաջին խմբագրությունը: Ընդհանրապես առաջին խմբագրության ձեռագիրը հազվագեղ է օգտագործվել, քանի որ այն դեռևս չի հրատարակված և դժվարհասանելի է գիտնականների լայն շրջանին:

«Ջիհան նյումա»-ն ամբողջությամբ թարգմանվել է լատիներեն Մ. Նորբերգի կողմից⁴³: Ինչպես նշում է ակադեմիկոս Ի. Յու.

⁴² Von Hammer, Rumel und Bosna, Wien, 1812. Համմերի այս գիրքը բուլղարերենի է թարգմանել Ստոյան Արգիրովը: Տե՛ս Мустафа бен Абдулах-Хаджи Халфа, Румелия и Босна. Географическое описание. От немского издание на Юсеф Хамер превел и снабдил с объяснителни бележки Стоян Аргиров, София, 1938. Համմերը մի շարք հոգվածներ է թարգմանել նաև Իրրահիմ Մյուսթեֆերիկայի հրատարակությունից: Տե՛ս Jahrbucher der Litteratur, t. XIII, Wien, 1821, s. 213—265, t. XIV, 1822, s. 21—88.

⁴³ Norberg Mathias, Gihannuma, geographia Orientalis, ex turcico in latinum versa, t. I—II, Londini Gothorum, 1818.

կրաշկովսկին՝ «Ներկայումս այդ թարգմանությունը կարելի է միանգամայն հնացած համարել, հակառակ նորերի ժամանակին կատարած բոլոր ծառայություններին»⁴⁴:

Հատիներեն մի այլ թարգմանություն «De Liber Mundum Ostendens» վերնագրով (կատարված Օ. Հ. Կեշվինդի, Վ. Հուսարդի և Տ. Շտուրմերի կողմից) անտիպ վիճակում գտնվում է Վիեննայի Մխիթարյանների գրադարանում⁴⁵:

Փոքր Ասիային վերաբերող նյութերի ֆրանսերեն առաջին թարգմանությունը պատկանում է Մ. Արմենի գրչին: Այն հրատարակվել է 1846 թ. Սեն Մարտինի «Աշխարհագրական հայտնագործումների պատմության» մեջ⁴⁶: Այս թարգմանության մեջ ընդգրկված են նիրատ գետի (Կարասու վտակով) և էգեյան ծովի միջև ընկած նահանգների նկարագրությունը: Հասկանալի է, որ այստեղ չի տրված Հայաստանի լրիվ նկարագրությունը: Զգալի կրճատումներով և առանց ծանոթագրությունների թարգմանված են այն հատվածները, որոնք ընդգրկում են Կարինի լիվայի (էրզրումի վիլայեթից), Ադանայի և Մարաշի վիլայեթների նկարագրությունը:

Դոյություն ունի նաև Հայաստանին, Քուրդիստանին և մասամբ Արարական Արևելքի երկրներին վերաբերող նյութերի ֆրանսերեն մի այլ թարգմանություն, որ կատարել է ռուս արևելագետ Ֆ. Շարմուան⁴⁷: Անհրաժեշտ է նշել, որ Արմենի թարգմանությունը իր որակով զիջում է Շարմուայի թարգմանությանը: Հայաստանի վերաբերյալ նյութերը ռուսերեն թարգմանելու ընթացքում, մենք նպատակահարմար գտանք քննադատական համեմատություն կատարել հատկապես Շարմուայի ֆրանսերեն թարգմանության հետ, քանի որ այն մեր կարծիքով հանդիսանում է առավել հաջող թարգմանություն⁴⁸: Այսուհանդերձ Շարմուայի թարգմանությունը կատարված է բավականին ազատ, առանց պահպանելու գիտական թարգմանություններում ընդունված սկզբունքը: Այսպես, այն լրացուցիչ բառերն ու դարձվածքները, որոնք հանդիսանում են

⁴⁴ И. Ю. Крачковский, Избр. соч., стр. 621.

⁴⁵ Fr. Babinger, Die Geschichtschreiber..., s. 200.

⁴⁶ Saint-Martin, Histoire des découvertes géographiques de nations européennes dans les diverse parties du monde, t. 3, Paris, 1846, p. 642.

⁴⁷ Ш. Ф. В. Charmoy, Chéref-nâme ou fastes de la Nation Kourde par Chéref-ou'ddine, t. I, St. Pétersbourg, 1868, pp. 159—203, 237—248.

⁴⁸ Մենք պատրաստում ենք Հայաստանին վերաբերող նյութերի ռուսերեն առաջին գիտական թարգմանությունը՝ անհրաժեշտ ծանոթագրություններով:

Շարմուայի հավելվածները, շին անված փակագծերի մեջ: Գոյություն ունեն նաև մի շարք տեղերի անվանումներ, որոնք սխալաբար են ընթերցված: Օր. Դովին, Տետեվան, Գէօլուն և այլն (Դվինի, Տադվանի, Գյուլեկի փոխարեն): Բացի այդ նկատվում են նաև այլ անճշտություններ, որոնք ի հայտ են բերված մեր թարգմանության ծանոթագրություններում:

«Ջիհան նյումա»-ի ոչ լրիվ թարգմանությունը եղել է նաև հայերեն՝ Հակոբ Նալյանի կողմից կատարված, որը սակայն մնացել է անտիպ⁴⁹: Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների վերաբերյալ նյութերը մասնակի կրճատումներով թարգմանել է Ա. Խ. Սաֆրաստյանը⁵⁰:

Այստեղ հարկ ենք համարում ճշտել մի փաստ: Լեոն «Հայոց պատմության» մեջ գրում է, թե իբր «Ջիհան նյումա»-ն հայերենի թարգմանել է նույն 17-րդ դարում Երեմիա Քյոմուրճյանը⁵¹: Այդ մասին թե մեր որոնումները և թե Երեմիա Քյոմուրճյանի և գրական ժառանգության վերաբերյալ վերջերս կատարված ուսումնասիրությունները հանգեցնում են այն եզրակացության, որ նման թարգմանություն գոյություն չի ունեցել⁵²: Անհրաժեշտ է նշել, որ իրականում Ե. Չ. Քյոմուրճյանը գրել է «Աշխարհագրություն» անունով մի աշխատություն, որտեղ նկարագրված է եղել Հնդկաստանը, Պարսկաստանը և Փոքր Ասիան (այդ թվում նաև Հայաստանը): Դժբախտաբար այդ աշխատությունը չի պահպանված և նրա մասին գոյություն ունեն շատ քիչ տեղեկություններ: Այնպես որ մենք կարող ենք միմիայն ենթադրել, որ նա օգտագործել է «Ջիհան նյումա»-ն, որպես աղբյուր իր «Աշխարհագրություն» շարագրելիս:

Վերջապես մի այլ հայ աշխարհագրագետ Ղուկաս Խնճիճյանը, նույնպես ունեցել է իր ձեռքի տակ «Ջիհան նյումա»-ն, երբ շարագրել է «Հայաստանը» իր «Աշխարհագրություն չորից մասանոց աշխարհի» գրքում: Այս աշխատության մեջ թարգմանաբար գրաբար լեզվով բերված են բազմաթիվ մեջբերումներ «Ջիհան նյումա»-ից:

49 Չ. Սիբուլի, Հայաստանը, ըստ թուրք աշխարհագիրների, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, էջ 101:

50 Ա. Խ. Սաֆրաստյան, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 13—73:

51 Լեոն, Հայոց պատմություն, հատ. Գ, Երևան, 1946, էջ 101:

52 Eremya Çelebi Kömürçüyan, İstanbul tarihi, İstanbul, 1952, s. XXIII.

2. Ս. Սահակյան, Երեմիա Քյոմուրճյան, Երևան, 1964.

Հողվածի վերջում հարկ ենք համարում նշել, որ «Ջիհան նյումա»-ն իր թերութիւններով հանդերձ, հանդիսանում է գիտական կարեւոր արժեք ներկայացնող պատմական աշխարհագրութիւն՝ ասիական երկրների, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի վերաբերյալ: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում նման տիպի պատմական աշխարհագրութիւն բացակայում է հայ պատմագրութեան մէջ: Կարևոր է նաև այն, որ «Ջիհան նյումա»-ն հանդիսանում է որպես թուրք դիւանականի ստեղծագործութիւն, որը տվել է իր անձնական եզրակացութիւնը Հայաստանի սահմանների և 17-րդ դ. Օսմանյան կայսրութեան մէջ մտնող նրա հողերի վարչական բաժանման մասին:

А. А. ПАПАЗЯН

ИСТОРИЧЕСКАЯ АРМЕНИЯ В «ДЖИХАН-НЮМА» КЯТИБА ЧЕЛЕБИ (XVII в.)

Резюме

«Джихан-ньюма» («Миропоказатель», «Косморама») — первое всеобщее историко-географическое произведение, написанное на турецком языке Кятибом Челеби в 1648 г., и одна из первопечатных книг, изданных основателем первой турецкой типографии Ибрагимом Мютеферриком в 1732 г.

«Джихан-ньюма», которая ныне представляет библиографическую редкость, состоит из обстоятельного предисловия и разделов с описанием стран. Глава 41 включает описание только западных областей Армении, т. е. той части Армении, которая по договору, заключенному между Ираном и Турцией в Каср-и Ширине (14 сентября 1639 г.), попала под господство Османской империи. Описание городов Грузии, Албании (Кавказской) и Азербайджана (Иранский) дано в 39-й главе.

В статье дается общая характеристика «Джихан-ньюма», сопоставление источников, использованных Кятибом Челеби в изложении раздела исторической географии Армении, сведения о существующих переводах на другие языки и их оценка. Здесь же выявлены некоторые неточности в изложении Кятиба Челеби.